ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

25 Նոյեմբերի երեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

163
(3194)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

2.5 ՄԼՆ ԴՈԼԱՐ՝ ԱՄԱՆՈՐՅԱ ԶԱՐԴԱՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ամանորյա զարդարանքները քաղաքին հաղորդում են ուրախություն ու ջերմություն, սակայն դրանց արժեքը պետական բյուջեի համար հասնում է միլիոնների, երբեմն էլ՝ միլիարդների:

Քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտարարեց, որ Հանրապետության գլխավոր տոնածառի լույսերը այս տարի կմիանան դեկտեմբերի 14-ին: «Ժողովուրդ» օրաթերթը շտապեց հետաքրքրվել, թե որքան է արժենալու ամանորյա ձեւավորումն ու ինչ բեռ է այն դառնալու ՀՀ բյուջեի համար:

Քաղաքապետարանը, պատասխանելով «Ժողովուրդ»-ի հարցմանը, հայտնել է. «Երեւան քաղաքի տոնական ձեւավորման աշխատանքների կատարման համար հայտարարվել է երկփուլ մրցույթ՝ գնման ընթացակարգով ընդհանուր 607.645.000 ՀՀ դրամ, որից 57.645.000 ՀՀ դրամով նախատեսվում է ձեռք բերել Հանրապետության հրապարակի մայր տոնածառի ճյուղեր, լույսեր եւ վարչական շրջաններում տեղադրվող տոնածառերի լույսեր եւ գագաթներ:

Հայտնում ենք նաեւ, որ վերոնշյալ երկփուլ մրցույթի շրջանակում իրականացվելու են Հանրապետության հրապարակի երգող շատրվանների տարածքի ամանորյա ձեւավորման, Սուրբ Ծննդյան տոնավաճառի կազմակերպման եւ Հանրապետության հրապարակում գլխավոր տոնածառի լույսերի վառման արարողություն, որի համար նախատեսվել է 345.000.000 ՀՀ դրամ»:

Արդյունքում պարզ է դառնում, որ Երեւանի քաղաքային իշխանությունները Ամանորի տոնական նախապատրաստությունների համար նախատեսում են ծախսել 952 մլն 645 հազար դրամ՝ գրեթե 1 մլրդ դրամ կամ գրեթե 2 մլն 500 հազար ԱՄՆ դոլար:



8 ամիս առաջ Մերձավանում ՔՊ-ական Միեր Ախտոյանի եւ Վալոդյա Գրիգորյանի թիմակիցների միջեւ հնչած կրակոցների գործը վարած քննիչ Սեւակ Խաչատրյանը նոր պաշտոն ստացավ. ոչ ավել ոչ պակաս՝ նա նշանակվել է Արմավիրի մարզային քննչական վարչության պետ: Մինչդեռ եթե 7 ամիս առաջ քննիչ Սեւակ Խաչատրյանը օբյեկտիվ քններ եւ պատասխանատվության կանչեր բոլոր կողմերին՝ չշրջանցելով Մերձավանի նախկին ղեկավար ՔՊ-ական Միեր Ախտոյանին, որը տանից նստած հետեւում էր ու փաստացի նկարում, թե ինչպես են մի խումբ երիտասարդներ անխնա ծեծում միմյանց, ինչի հետեւանքով սպանվեց Գրիգոր Օհանյանը, ապա մյուս կրակոցները Մերձավանում չէին հնչի: Ի վերջո, արդյոք քննիչ Սեւակ Խաչատրյանը չէ՞ր տեսել տեսանյութը, որտեղ ՔՊ-ական Միեր Ախտոյանը, Մերձավանի կրակոցների օրը հայտարարում է. «Վալո՛ղ, գլուխդ ուտելու եմ», եւ 7 ամիս անց սպանվում է Վալոդյա Գրիգորյանը: Ահա, Սեւակ Խաչատրյանի վարույթում քննվող գործը մի շարք հարցեր է առաջ քաշում. պաշտոնից ազատվում է իր նախկին ղեկավարը, իսկ ամիսներ անց հենց ինքն է պաշտոն ստանում: Հրամանը ստորագրվել է 2025 թվականի նոյեմբերի 12-ին՝ հիմք ընդունելով ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 05-ի եզրակացությունը եւ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով եւ 20-րդ հոդվածի 7-րդ մասով:

Դատական համակարգում դժգոհության նոր ալիք է հասունանում, եւ չի բացառվում, որ իրավիճակը հասնի գործադուլի: «Ժողովուրդ» օրաթերթը գրեթե բոլոր դատարաններից ստացել է ահազանգեր. դատավորների օգնականները, գործավարները եւ նիստերի քարտուղարները հայտնում են, որ գործող ծանրաբեռնվածությամբ անհնար է աշխատել ցածր աշխատավարձով, ու նրանք այլեւս չեն պատրաստվում լռել: Հիշեցնենք, որ դեռ 2024 թվականի հունիսի 24-ին վարչական դատարանի աշխատակիցները սկսել էին գործադուլ: Դատական դեպարտամենտը, փորձելով մեղմել իրավիճակը, հայտարարություն տարածեց՝նշելով, որ Դատական իշխանությունը դեռեւս 2023-ից, տարբեր մակարդակներում, տարբեր միջոցներով բազմիցս բարձրացրել է այս խնդիրը: «Դեպարտամենտը եւ Դատական իշխանության մյուս մարմիններն իրենց լիազորությունների շրջանակում բոլոր հնարավոր գործողությունները կատարել են, եւ հարցը գտնվում է պետական մարմինների ուշադրության կենտրոնում: «Հուսով ենք՝ դատական ծառայողները բարձր պատասխանատվությամբ կշարունակեն իրենց աշխատանքը՝ կարեւորելով արդարադատության շահը, իսկ անձնական հանգամանքներով պայմանավորված անհնարինության դեպքում՝ իրենց ծառայությունը կիրականացնեն ավելի բարձր վարձատրվող ոլորտներում, մինչեւ աշխատավարձերի խնդրի համակարգային լուծումը» - նշված էր հայտարարությունում: Արդեն մեկուկես տարի է անցել, սակայն վարչական դատարանում իրավիճակը նույնն է, խնդիրը չի լուծվել: Հիմա էլ մյուս դատարաններում աշխատակիցները որոշել են չլռել:

«Ժողովուրդ» օրաթերթի՝ իշխանություններին մոտ կանգնած աղբյուրները հայտնում են, որ Նիկոլ Փաշինյանը իր նեղ շրջապատում հայտարարել է՝ արդեն ձեւավորվել է սրբազանների մի խումբ, որը գործում է իշխանության օգտին, եւ որի համար մշակվում է հատուկ գործողությունների պլան: Մեր աղբյուրների պնդմամբ՝ այդ սրբազանները եկեղեցական ներքին քննարկումների ժամանակ պետք է հետեւողականորեն շեշտեն Կաթողիկոսի շրջապատի ներկայացուցիչների գործողությունները, նրանց պատճառով սկսված հակաեկեղեցական արշավը եւ սպասվող ճնշումները: Ըստ մեզ հասած լուրերի՝ այս գործընթացը նախատեսված է այնպես, որ Կաթողիկոսի շուրջը դժգոհությունների ալիք հասունանա՝ նրան մղելով Վեհարանը լքելու որոշման: Տեղեկացվում է նաեւ, որ Փաշինյանը ներքին զրույցներում վստահություն է արտահայտում՝ առաջիկայում ճնշումները առավել կուժեղանան, եւ իշխանությունն իր համար ցանկալի արդյունքին կհասնի բավական շուտ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱԿ-Ի ԱՐՁԱԳԱՆՔԸ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ

«Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԳՈՐԾՈՎ 53 ՔՆՆԻՉ ԿԱ, ՄԱՐՏԻ 1-Ի ԳՈՐԾՈՎ՝ 30»

Օրերս Ազգային ժողովում հրավիրվել էր հանրային քննարկում՝ «Մարտի 1-ի գործի քննությունը նախորդող ժամանակահատվածում, «Մարտի 1-ի գործի» վերահմաստավորումը «Ֆրմանյանը եւ այլք ընդդեմ Հայաստանի» գործով կայացված վճռի լույսի ներքո» թեմայով: Քննարկմանը, սակայն, «Հայ ազգային կոնգրեսից» ոչ ոքի չէին հրավիրել: «Ժողովուրդ» օրաթերթը այս եւ հարակից այլ հարցերով զրուցել է ՀԱԿ փոխնախագահ Արամ Մանուկյանի հետ:



-Պարոն Մանուկյան, օրերս Ազգային ժողովում տեղի ունեցավ «Մարտի մեկի» վերաբերյալ հերթական քննարկումը, որին Դուք չմասնակցեցիք: ՀԱԿ-ից որեւէ անդամ հրավիրված չէր, ինչը եւ կասկածելի էր, եւ խնդրահարույց: Ձեր մեկնաբանությունը ո՞րն է, ինչո՞ւ ձեզ չէին հրավիրել քննարկմանը:

-Առաջին դեպքը չէ: Ես հիշում եմ՝ երբ ՔՊ-ն եկավ իշխանության 2018-ի ամռանը, 2018-ի աշնանը պիտի նշեին անկախության տոնը, եւ բոլոր կուսակցություններին հրավիրել էին՝ բացի ՀԱԿ-ից: Այն ժամանակ հարաբերությունները դեռ այսքան սրված չէին, կարծում էի՝ գուցե թյուրիմացություն էր: Զանգեցի ԱԺ նախագահին, ասացի՝ արդյոք հրավիրել են բոլոր կուսակցություններին, պատասխանեց՝ այո: Հարցրի՝ այդ դեպքում Կոնգրեսին ինչո՞ւ չեն հրավիրել, զարմացավ, թե տեղյակ չի եղել: Հիշեցրի, որ ՀԱԿ-ը անկախության հետ կապված քաղաքական ուժ է, գոնե իմ անձի հետ անկախության հռչակագիրը կապվում է, ինչո՞ւ չեք հրավիրել: Պատասխանեց՝ միգուցե սխալմունք է, վատ զգաց իրեն: Ես այդ ժամանակ կարծեցի, թե գուցե իսկապես թյուրիմացություն է եղել, բայց հետո, երբ նույն վերաբերմունքը շարունակվեց, զգացի, որ սա ոչ թե պատահական է, այլ նպատակային: Եվ տարիների ընթացքում այդ համոզմունքը դարձավ վստահություն, որովհետեւ սկսեցին չցուցադրվել անկախության վերաբերյալ ֆիլմերը, հաղորդումները: Մենք վկան եղանք, որ անկախության հռչակագիրը վտանգվեց: Այս պահին Ալիեւի հետ հարաբերությունները իրենց համար ավելի կարեւոր են քան Հայաստանի ինքնիշխանությունը:

Ինչ վերաբերում է Ձեր հարցին. «Մարտի մեկի» շահառուն (չգիտեմ՝ որքանով է ճիշտ այդ բառը), ուզեն թե չուզեն, «Ազգային կոնգրեսն» է: 2008-ի մարտի մեկի իրադարձությունները տեղի ունեցան մեր ցույցի ժամանակ, մեր ակտիվիստներն էին տուժածները: Մենք ունեցանք շուրջ 150 քաղբանտարկյալ: Շուրջ 3-4 տարի նրանք բանտերում անցկացրին, եւ 1000-ից ավելի մարդ էլ տուժեց այլ ձեւերով՝ մի մասը աշխատանքը կորցրեց, մի մասը վիրավորվեց, մի մասը Հայաստանից գնաց: Տարբեր զրկանքներ կրեցին, եւ հիմնական ուժը, թիրախը «Հայ ազգային կոնգրես»-ն էր: Շարունակելով հանդերձ՝ «Հայ ազգային կոնգրեսն» էր մշտապես հետեւողական գործընթաց կազմակերպում քաղբանտարկյալների ազատման համար, «Մարտի մեկի» գործը բացահայտելու, հանցագործներին պատժելու համար: Մենք էինք, որ եվրոպական կառույցներում, մասնավորապես Լիբերալների համագումարներում, անընդհատ այդ հարցն էինք բարձրացնում, եւ մի քանի անգամ հրատապ որոշումներ ենք բերել քաղբանտարկյալներին ազատելու եւ հանցագործներին պատժելու համար: Այսինքն՝ «Մարտի մեկը» ուզած թե չուզած առնչվում է մեզ:

Հարցազրույցի շարունակությունը թերթի վաղվա՝ 3195 համարում:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԱԴՐԲԵՋԱՆԸ ԸՆՏՐՎԵԼ Է ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄ

Երեկ՝ նոյեմբերի 24-ին, 1972 թվականին Փարիզում ստեղծված ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիայի մասնակից պետությունների գլխավոր ասամբլեայի 25-րդ նստաշրջանում Ադրբեջանը 2025-2029 թվականների համար ընտրվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կոմիտեի անդամ:

Ըստ Ադրբեջանի ԱԳՆ-ի՝ Արեւելյան Եվրոպայի տարածաշրջանից մեկ տեղի համար մրցել են հինգ երկրներ: Առաջին փուլում Ադրբեջանը 160 ձայնից ստացել է 92-ը:

21 պետությունից բաղկացած կոմիտեն պատասխանատու է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկի կազմման, վայրերի պահպանման եւ Համաշխարհային ժառանգության հիմնադրամի միջոցների բաշխման համար: Ադրբեջանը նախկինում կոմիտեի անդամ է եղել 2015-2019 թվականներին, իսկ 2019 թվականին հյուրընկալել է դրա 43-րդ նստաշրջանը:

Տարիներ անց Արցախի մշակութային ժառանգությունը ոչնչացնող Ադրբեջանը դարձյալ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կոմիտեի անդամ է ընտրվել:

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ-ԵԿԵՂԵՑԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԵՌ ԼԱՐՎԱԾ ԵՆ

Կիրակի օրը Արարատի մարզի Սուրբ Հակոբ եկեղեցում տեղի ունեցած պատարագը, որին մասնակցում էր վարչապետ Նիկոլ Փաշինյանը, անցկացրեց թեմի առաջնորդ Գեւորգ Սրբազանը: Մամուլում տեղեկություն է հրապարակվել, որ կարգալույծ հռչակված Տեր Արամին (այժմ՝ ավազանի անունով Ստեփան Ասատրյան) քահանայական կարգից զրկելու որոշմանը դեմ է քվեարկել Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու Մասյացոտնի թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տեր Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը:

Տեր Գեւորգը անգամ անդրադարձել էր այս տեղեկություններին եւ հաստատել, որ դեմ է քվեարկել. «Նախկին Տեր Արամի կարգալուծության հարցում իմ դեմ լինելը պայմանավորված է եղել բացառապես Եկեղեցու շահով, եւ իմ մոտեցումը հարցին չի կարելի կապել քաղաքական որեւէ օրակարգի հետ՝ ընդդիմության կամ իշխանության»:

Փաստաբան Արա Զոհրաբյանին խնդրեցինք մեկնաբանել ստեղծված իրավիճակը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մի շարք հոգեւորականներ հարցաքննվում են Տեր Արամին կարգալույծ հռչակելու հարցով:

Ի պատասխան՝ Արա Զոհրաբյանը հայտնեց. «Նախկին Տեր Արամին, այժմ՝ Ստեփան Ասատրյանին կարգազրկել է Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Այդ իրավասությունն ունի միայն Կաթողիկոսը: Պարգեւների շնորհման եւ կարգապահական հարցերի հանձնախումբը խորհրդակցական մարմին է, որը Կաթողիկոսին առաջարկություն է ներկայացնում: Նախկին Տեր Արամի հարցով որոշումը կայացվել է Պարգեւների շնորհման եւ կարգապահական հարցերի հանձնախմբի ներկա անդամների միաձայնությամբ: Հանձնախմբի անդամ Տեր Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը նույնպես կողմ է եղել: Մայր Աթոռում կա նաեւ ստորագրված արձանագրություն: Թե ինչու է Գեւորգ Սրբազանն այդպես արտահայտվել, կամ թե ինչ թյուրիմացություն է եղել հարցազրույց տալու ժամանակ, պետք է Սրբազանից ճշտեք»:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ՝ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԻՋԱՆՑՔԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

«Զանգեզուրի միջանցքը թյուրքական աշխարհի միասնության խորհրդանիշ է», - հայտարարել է CAREC նախագծային գրասենյակի տնօրեն Մերգեն Կեպբանովը: Ըստ նրա՝ «Զանգեզուրի միջանցքը ստեղծում է պայմաններ թյուրքական աշխարհում համագործակցության զարգացման համար՝ տնտեսական, մշակութային ոլորտներում, հասարակական դիվանագիտության ամրապնդման եւ այլ ուղղություններով: Թուրքմենստանը պատրաստ է ամրապնդել համագործակցությունը թյուրքական աշխարհի բոլոր երկրների հետ բոլոր ուղղություններով»:

Ուզբեկստանի Օլիյ Մաժլիսի Օրենսդրական պալատի կոմիտեի նախագահ, «Յուքսալիշ» շարժման ղեկավար Բաբուր Բեկմուրադովը նշել է. «Զանգեզուրի միջանցքը ռազմավարական նշանակություն ունի թյուրքական աշխարհի եւ ընդարձակ եվրասիական տարածքի համար: Այն Միջին միջանցքի մաս է, որը միավորում է Արեւելքն ու Արեւմուտքը: Զանգեզուրի միջանցքը մեզ համար կդառնա ամենակարճ եւ ամենահարմար տարանցիկ ուղին: Այն կբերի շահույթ՝ լոգիստիկայի եւ ծախսերի կրճատման տեսանկյունից: Մյուս կողմից՝ այս միջանցքը կնպաստի արտաքին առեւտրի դիվերսիֆիկացմանն ու զարգացմանը: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ Կենտրոնական Ասիայի եւ Հարավային Կովկասի փոխկապակցվածությունը Զանգեզուրի միջանցքի շնորհիվ դուրս է գալիս նոր փուլ: Մենք հասկանում ենք, որ նման նախագծերի իրագործման համար անհրաժեշտ են խաղաղություն եւ կայունություն: Այս համատեքստում Ուզբեկստանը աջակցում է Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղ գործընթացին»:

Թուրքիայի ներքին գործերի ներկայացուցիչը քաղաքացիական հասարակության հետ կապերի գլխավոր վարչության փոխտնօրեն Օզջան Այգյունն իր հերթին նշել է. «Զանգեզուրի միջանցքի լիարժեք գործարկումը պատմական իրադարձություն կլինի եւ զգալի ներդրում կունենա տարածաշրջանի եւ աշխարհի տնտեսության մեջ»:

Ըստ նրա՝ միջանցքը առաջին հերթին էական օգուտներ կբերի տարածաշրջանի եւ առանձին երկրների տնտեսությանը, ինչպես նաեւ համաշխարհային տնտեսությանը. «Եթե Սուեզի ջրանցքի բացումը մեծ առավելություններ բերեց տարածաշրջանի երկրներին եւ գլոբալ տնտեսությանը, ապա Զանգեզուրի միջանցքը կդառնա լուրջ փոփոխությունների սկիզբ տարածաշրջանի տնտեսության մեջ», - ընդգծել է նա:

ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ԿՓՈԽՎԻ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայաստանում անհրաժեշտ է փոխել տեսախցիկներով արձանագրված ՃԵԿ (ճանապարհային երթեւեկության կանոններ) խախտումների ձեւակերպման կարգը, որոնք կատարում են օտարերկրյա քաղաքացիները հանրապետությունում գրանցված մեքենաներով:

Այս մասին երեկ՝ նոյեմբերի 24-ին, Ազգային ժողովի պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նիստին՝ «Տեսալուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթեւեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրինագծի քննարկման ժամանակ հայտարարել է ներքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Ղազարյանը:

Ներկայումս, ըստ փոխնախարարի, երբ օտարերկրյա քաղաքացին խախտում է կատարում չգրանցված տրանսպորտային միջոցով, եւ դա ֆիքսվում է տեսախցիկներով, ՃԵԿ (ճանապարհային երթեվեկության կանոններ) խախտման վերաբերյալ արձանագրությունն ու վարչական ակտն ուղարկվում է սահմանապահ ծառայությանը: Այնուհետեւ արդեն սահմանին օտարերկրացին ծանուցում է ստանում, որից հետո պարտադիր կարգով մարում է Հայաստանի պետության հանդեպ պարտավորությունները:

«Սակայն խնդիրներ են առաջանում, երբ օտարերկրացիները նման խախտումներ են կատարում Հայաստանում գրանցված տրանսպորտային միջոցով: Դրա մասին տեղեկատվությունը ուղարկվում է սեփականատիրոջը», - հավելել է Արմեն Ղազարյանը:

Ըստ փոխնախարարի՝ նման միջադեպերը հատկապես հաճախ են հանդիպում վարձակալված մեքենաների դեպքում, երբ խախտողը ոչ թե մեքենայի սեփականատերն է, այլ այն վարձակալած օտարերկրացին: Նման դեպքերում ակտն ուղարկվում է օտարերկրյա քաղաքացու հաշվառման վայր: Այսինքն, ըստ էության, արտասահման:

«Դրա հետ կապված՝ Հայաստանի պետբյուջեից տարեկան կտրվածքով կատարվում է մոտ 90 մլն դրամի ծախս», - հայտնել է կառավարության ներկայացուցիչը:

Այսպիսով, օրինագծով առաջարկվում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված տրանսպորտային միջոցներով օտարերկրյա քաղաքացիների կատարած իրավախախտումների դեպքում իրականացնել նույնպիսի վարչարարություն, ինչպիսին իրականացվում է Հայաստանում չգրանցված տրանսպորտային միջոցների դեպքում:

Քննարկումներից հետո օրենսդրական նախաձեռնությունը ստացել է Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ, ԹԵ՞ ՀԱՄԵՐԳ-ԵՐԵԿՈ

ԻՆՉՈՒ ԷՐ ԻՐԽԱՆԱԿԱՆ ԷԼԻՏԱՆ ՀԱՎԱՔՎԵԼ «ՀԱՄԱԼԻՐՈՒՄ»

Շաբաթ օրը իշխանական ողջ էլիտան, կառավարության տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներ Մարզահամերգային համալիրում էին: Մոտ 7000 անձ հավաքվել էր լսելու Նիկոլ Փաշինյանին, Կառավարության մյուս անդամների առաջիկա ծրագրերը:

Ավելին՝ քաղաքական հավաքը նաեւ մշակութային մաս ուներ: Մարզահամերգային համալիրի բեմ էր բարձրացել երգչուհի Իվետա Մուկուչյանը:

Հիշեցնենք, որ նախօրեին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Կառավարությունից պետական գերատեսչությունները դիմում-նամակ էին ստացել, որ 2026 թվականի նախընտրական ծրագրի համար առաջարկներ ներկայացնեն, որը պետք է քննարկվեր նոյեմբերի 22-ին:

Նշենք, որ միջոցառմանը ներկա են եղել ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը, փոխվարչապետներ Միհեր Գրիգորյանն ու Տիգրան Խաչատրյանը, վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, ԱԱԽ քարտար Արմեն Գրիգորյանը, ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը, ԱԱԾ տնօրեն Անդրանիկ Սիմոնյանը, ՆԳ նախարար Արփինե Սարգսյանը, Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը:

ԱԺ ՔՊ խմբակցության եւ վարչության անդամները նույնպես մեկ մարդու նման առաջին շարքերում էին՝ խմբակցության ղեկավարից մինչեւ շարքային պատգամավոր: Երեւանի ՔՊ-ական ավագանու անդամները, պետական համակարգում աշխատող քաղծառայողները եւս Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում էին. նրանք երբեմն ուղիղ եթեր էին մտնում՝ հիացած ցուցադրելով Նիկոլ Փաշինյանի ելույթը:

7000 հոգանոց պետական աշխատողների համար կազմակերպված համաժողովը կտրուկ դարձավ համերգ-երեկո, երբ բեմ բարձրացավ երգչուհի Իվետա Մուկուչյանը:

Իվետան նաեւ ինստագրամյան հրապարակում էր արել՝ գրելով. «Եկեք չքաղաքականացնենք, բայց հաճելի էր վարչապետի կողմից ընտրվել միակ արտիստ՝ ելույթ ունենալու ՀՀ պետական մարմինների ներկայացուցիչների առաջին համաժողովի ժամանակ՝ 7000 քաղաքական գործիչների առաջ», - գրել էր երգչուհին:

Միջոցառումը հանրային հնչողություն ստացավ նաեւ այն ժամանակ, երբ ազգությամբ ռուս բլոգերները տեսանյութ հրապարակեցին՝ զարմացած հարցնելով, թե ովքեր են այս մարդիկ: Հարցական էր, թե միջոցառումը, որ պետական մարմինների ներկայացուցիչներին էր վերաբերում, ինչու էր հյուրընկալել աշակերտներին, այդ ինչպես էր որոշվել, թե որ դպրոցի տնօրենները եւ աշակերտները պետք է ներկա գտնվեին:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Ծաղկաձոր համայնքի ներկայիս ղեկավար Նարեկ Հարությունյանը, ով կիրակի օրը հյուրընկալել էր Կառավարության անձնակազմին, հեղափոխությունից մեկ տարի առաջ էր առաջին անգամ քաղաքականություն մտնելու քայլ արել. 2017-ին նա նշանակվել էր Մեղրաձոր համայնքի ղեկավարի տեղակալ:

Այնուհետեւ 2020 թվականին Հարությունյանը նշանակվել է Մեղրաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատար, իսկ մոտ մեկ տարի անց՝ Ծաղկաձոր խոշորացված համայնքի ղեկավար: Արդեն չորս տարի է նա ղեկավարում է համայնքը:

Համայնքապետը երկար տարիներ աշխատել է «Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ-ում, որը ներկայում ղեկավարում է հայտնի գործարար Նարեկ Նալբանդյանը:

Ի՞նչ ունեցվածք ունի Ծաղկաձորի համայնքապետը.

Նարեկ Հարությունյանը հայտարարագրել է 6 անշարժ գույք: Դրանցից հինգը՝ չորս հողամաս եւ մեկ անհատական բնակելի տուն, ձեռք է բերել 1991 թվականին: 2020-ին նա գնել է նաեւ բնակարան Երեւանում՝ Արաբկիր վարչական շրջանում:

Համայնքապետը տրանսպորտային միջոցներ չի հայտարարագրել:

Նրա կանխիկ դրամական միջոցները կազմել են 3 մլն դրամ, իսկ տարեկան եկամուտները՝ 10 մլն 632 հազար դրամ: Այդ գումարից 10 մլն դրամը աշխատանքի վարձատրություն է Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմից, իսկ 600 հազար դրամը այլ եկամուտ է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն, ՄՍԾ Հրազդանի տարածքային կենտրոնից:

Ծաղկաձորի համայնքապետը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է:

ՆՈՐ ՊԱՇՏՈՆ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արթուր Պողոսյանը ստորագրել է հրաման, որով Սեւակ Խաչատուրի Խաչատրյանը նշանակվել է Արմավիրի մարզային քննչական վարչության պետ:

Հրամանը ստորագրվել է 2025 թվականի նոյեմբերի 12-ին՝ հիմք ընդունելով ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 05-ի եզրակացությունը եւ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով եւ 20-րդ հոդվածի 7-րդ մասով:

Հրամանով արդարադատության երկրորդ դասի խորհրդական Սեւակ Խաչատուրի Խաչատրյանը նշանակվել է ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության պետ՝ ազատվելով ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալի պաշտոնից:

Հրամանի համաձայն Սեւակ Խաչատրյանը հանվել է ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց ծառայողական առաջխաղացման ցուցակից: Աշխատավարձը սահմանվել է համաձայն «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի:

ԱԼԻԵՎԻ ՕԳՆԱԿԱՆԻ ԽՆԴՐԱՆՔԸ՝ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Ալիեւի օգնականը խնդրել է հայ հասարակությանը փոխանցել, որ պատերազմն Ադրբեջանի համար ավարտվել է, Երեւանում տեղի ունեցող ասուլիսի ընթացքում ասել է Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոնի ղեկավար Արեգ Քոչինյանը՝ խոսելով Բաքվում Հիքմեթ Հաջիեւի հետ հանդիպման մասին:

«Հայ-ադրբեջանական հակամարտությունն Ադրբեջանի համար ավարտվել է: Եվ, որ ուզում են այսօրվա վիճակից կառուցել խաղաղություն եւ գնալ դեպի խաղաղություն: Իրենց համար չափազանց կարեւոր է Հայաստանի հետ համապարփակ եւ երկարաժամկետեւ խաղաղություն կառուցել, եւ պատրաստ են այդ ճանապարհով գնալ առաջ»,- նշել է նա:

Հիշեցնենք՝ նոյեմբերի 21-ին ՀՀ քաղհասարակության ներկայացուցիչներ էին մեկնել են Բաքու: Բաքու ժամանած ներկայացուցիչներն էին Երեւանի մամուլի ակումբի պատվավոր նախագահ Բորիս Նավասարդյանը, քաղաքագետներ Արեգ Քոչինյանը, Նարեկ Մինասյանը, Սամվել Մելիքսեթյանը, իրավապաշտպան Նաիրա Սուլթանյանը:

Նշենք նաեւ, որ հոկտեմբերի 22-ին Երեւանում տեղի է ունեցել քննարկում՝ Հայաստանի եւ Ադրբեջանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ. հարաբերությունների կարգավորման համատեքստում սա պատասխան այց է:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՍԵՎԱՆԻ ԲԱՆՏԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԸ

«ԱրմԼուր.էյէմ»-ին հայտնի դարձավ, որ Հակակոռուպցիոն կոմիտեն նախաքննության ավարտ է հայտարարել Սեւանի բանտի պետի տեղակալի քրեական գործով:

Թոռնիկ Հրաչյայի Գալստյանը, 2017 թվականի օգոստոսի 17-ից զբաղեցնելով ՀՀ ԱՆ ՔԿԾ «Սեւան» ՔԿ հիմնարկի պետի տեղակալի պաշտոնը, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հանդիսանալով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ, առնվազն 2021-2024 թթ. ընթացքում իր եղբոր եւ եղբոր զավակների անվամբ «Յունիբանկ» ԲԲ ընկերությունում ավանդադրել է փաստացի իրեն պատկանող, առանձնապես խոշոր չափերի գումարներ եւ յուրաքանչյուր ամիս ստացել ավանդի տոկոսագումարները:

Ավանդադրված գումարները 2024 թվականի դեկտեմբերի դրությամբ կազմել են շուրջ 43.390.000 ՀՀ դրամ: Թոռնիկ Գալստյանը վերոգրյալ ավանդները եւ դրանցից ստացված եկամուտները չի հայտարարագրել եւ թաքցրել է իր՝ 2022, 2023 եւ 2024 թվականներին ներկայացրած տարեկան հայտարարագրերում, ինչը հանգեցրել է առանձնապես խոշոր չափերով գույքի եւ եկամուտների չհայտարարագրման:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՔՐ. ՎԱՐՈՒՅԹԸ ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունում ավարտվել է 2024 թվականի հոկտեմբերի 20-ին Հրազդանի կիրճում օտարերկրյա քաղաքացուն ծանր մարմնական վնասվածք պատճառելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Քրեական վարույթի նախաքննության ընթացքում պարզվել է, որ Հ.Ե.-ն Հրազդանի կիրճում անձնական հարցերի շուրջ առաջացած վիճաբանության ժամանակ, իր մոտ գտնվող կտրող-ծակող առարկայի գործադրմամբ հարվածել է օտարերկրյա քաղաքացուն՝ վերջինիս պատճառելով կյանքի համար վտանգավոր մարմնական վնասվածք:

Հ.Ե.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով (զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը):

Վերջինս կալանավորված է:

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ ըստ էության քննության առնելու համար դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ԹՄՐԱՄԻՋՈՑԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՓՈՐՁ

Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի օպերատիվ վարչության «Արմավիր» տարածքային բաժնի ծառայողները, իրացնելով նախապես ստացված օպերատիվ տեղեկությունները, խուզարկության են ենթարկել «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող դատապարտյալի մոտ կարճատեւ տեսակցության եկած քաղաքացի Ա.Մ.-ին: Խուզարկության արդյունքում վերջինիս մոտից հայտնաբերվել է թմրամիջոցի նմանվող, մուգ շագանակագույն փոշեզանգված՝ 5,44 գրամ քաշով:

Ա.Մ.-ն ձերբակալվել է օպերատիվ ծառայողների կողմից եւ հայտնաբերված զանգվածի հետ միասին ներկայացվել ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժին:

ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ 18 ԱՄԻՍ

Ազգային ժողովի պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը հավանություն տվեց պարտադիր զինվորական ծառայության ժամկետը 6 ամսով կրճատելու վերաբերյալ՝ ՀՀ կառավարության ներկայացրած օրենքի նախագծին:

«Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծն ԱԺ հանձնաժողովի նիստում ներկայացրեց ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը:

«Նախատեսվում է շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 24-ամսյա ժամկետը փոխարինել 18-ամսյա ծառայության ժամկետով՝ դրա գործողությունը տարածելով 2026թ. հունվարի 1-ից հետո պարտադիր զինվորական ծառայության զորակոչվող քաղաքացիների վրա», - ասաց Պապիկյանը:

2025թ. ձմեռային զորակոչի շրջանակներում զինված ուժերի համալրումը սկսվելու է 2026թ հունվարի 7-ից, որի արդյունքում 18-ամսյա ժամկետով ծառայություն են իրականացնելու 2025թ ձմեռային զորակոչից սկսած՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիները:

Ծառայության ժամկետի կրճատումը չի տարածվելու 2026թ. հունվարի 1-ի դրությամբ պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների վրա:

Ըստ նախարարի՝ ժամկետի կրճատումը հնարավոր է դարձել վերջին տարիներին պայմանագրային զինվորական ծառայության գրավչության ավելացման եւ ընդլայնման ուղղությամբ կատարված եւ շարունակական աշխատանքների շնորհիվ:

Հարակից զեկուցող Արմեն Խաչատրյանը նշեց՝ բազմաթիվ բարեփոխումներ են իրականացվել ԶՈՒ-ում, որի արդյունքում հնարավոր է եղել ստանալ այս հաճելի նախագիծը:

ՏՂԱՄԱՐԴՈՒ ԴԻ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Նոյեմբերի 22-ին առեղծվածային ու ողբերգական դեպք է տեղի ունեցել Կոտայքի մարզում: Ժամը 14:30-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Գառնիի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Զրվեժ գյուղում գործող «Անուշիկ» ռեստորանահյուրանոցային համալիրի սենյակներից մեկում քաղաքացին չի արձագանքում հեռախոսազանգերին ու դռան թակոցներին:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, ժամանել են ոստիկանության Գառնիի բաժնի հերթապահ խումբը՝ բաժնի պետի 2 տեղակալների գլխավորությամբ:

Ոստիկանության Գառնիի բաժնից ահազանգել են ՀՀ ՆԳՆ Փրկարար ծառայության 911 ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն, որտեղից դեպքի վայր է ժամանել հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի հերթապահ խումբը:

Փրկարարները, բացելով դուռը, մահճակալին հայտնաբերել են տղամարդու դի:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԿԵՂԾ ԹՂԹԱԴՐԱՄՆԵՐ ԵՆ ՇՐՋԱՆԱՌՎԵԼ

«Շամշյան.քոմ»-ի տեղեկություններով՝ նոյեմբերի 12-ին արտառոց դեպք է տեղի ունեցել Վայոց ձորի մարզում: Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Եղեգնաձորի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Շիրակի մարզի բնակիչ 43-ամյա Մարիամ Վ.-ն եւ Արարատի մարզի բնակիչ 28-ամյա Դավիթ Դ.-ն վերջինիս կողմից շահագործվող «Ford Fusion» մակնիշի ավտոմեքենայով կեղծ փողեր իրացնելու նպատակով գտնվում են Արենի բնակավայրի տարածքում, Արարատի մարզի Սուրենավան բնակավայրում եւ Արենի բնակավայրում գործող տաղավարներից մեկում իրացրել են կեղծ թղթադրամներ եւ պատրաստվում են այլ վայրերում եւս իրացնել կեղծ թղթադրամներ:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, ստացված տեղեկություններն իրացնելիս հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով ժամը 21:10-ի սահմաններում Մարիամ Վ.-ն եւ Դավիթ Դ.-ն Երեւան-Մեղրի ավտոճանապարհի 121-րդ կմ հատվածում վերը նշված ավտոմեքենայով հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել են ոստիկանության Եղեգնաձորի բաժին, որտեղ անձնական խուզարկությամբ Դավիթ Դ.-ի մոտ գտնվող, կնոջ համար նախատեսված պայուսակից հայտնաբերվել է երեք հատ 2 հազար անվանական արժեքով, թվով 6 հատ հինգ հազար անվանական արժեքով, թվով 7 հատ 10 հազար անվանական արժեքով, թվով 36 հատ 20 հազար անվանական արժեքով, թվով 10 հատ 50 հազար անվանական արժեքով եւ թվով 10 հատ 100 հազար անվանական արժեքով կեղծ թղթադրամներ:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ Դավիթ Դ.-ն ոստիկաններին հայտնել է, որ հայտնաբերված թղթադրամները «Վալդբերիս» հավելվածով պատվիրել եւ ստացել է կինը՝ Մարիամ Վ.-ն, իսկ ինքը Արարատի մարզի Սուրենավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող հեղուկ գազի լիցքավորման կայանում մեքենայի լիցքավորման դիմաց վճարել է կեղծ 20 հազար դրամ անվանական արժեքով թղթադրամով եւ ստացել 18 հազար դրամ մանր, ինչպես նաեւ նույն օրը Արենի բնակավայրում՝ Երեւան-Մեղրի ավտոճանապարհի աջակողմյան հատվածում գտնվող տաղավարներից մեկում Մարիամ Վ.-ն կատարել է գնումներ, որի դիմաց վճարել է կեղծ 20 հազար դրամ:

Դեպքի փաստով ոստիկանության Եղեգնաձորի բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են ՀՀ Քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչություն:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 21-ից 24-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 281 դեպք, որից 7-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԴԻԼԻՋԱՆՈՒՄ ԳՅՈՒՂՄԹԵՐՔՆԵՐԻ ՇՈՒԿԱ ՉԿԱ

Դիլիջան համայնքի ղեկավար, 2021թ. փետրվարի 26-ից Դիլիջան համայնքը ղեկավարող Դավիթ Սարգսյանը Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում, «Ֆեյսբուքի» իր էջում պարբերաբար ներկայացնում է Դիլիջան համայնքում իր պաշտոնավարման ժամանակաշրջանում կատարվող աշխատանքները՝ փողոցների ասֆալտապատում, սալիկապատում, Դիլիջան քաղաքի բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգում, տանիքների նոր ծածկի տեղադրում, մշակույթի օբյեկտների վերանորոգում եւ այլն:

Չնայած արվող աշխատանքներին,իրականացվող պետական եւ սուբվենցիոն ծրագրերին՝ Դիլիջան քաղաքում եւ նույնանուն համայնքում շատ հիմնահարցեր տարիներով չեն ստանում իրենց լուծումը: Գյուղատնտեսական համայնքի կենտրոն Դիլիջան համայնքում գյուղատնտեսայան շուկա չկա, ինչի հետեւանքով Դիլիջան քաղաքում գյուղատնտեսական մթերքների գները բարձր են. դրանք նույնիսկ Երեւան քաղաքում վաճառվող գյուղմթերքների գներից են բարձր: Դիլիջան քաղաքում գյուղատնտեսական մթերքների գները բարձր են ոչ միայն այն պատճառով, որ Դիլիջանը տուրիստական քաղաք . այդտեղ գործում են բազում հյուրանոցներ, հյուրատներ, ռեստորաններ, սրճարաններ, որոնք գյուղմթերքների մեծաքանակ գնորդներ են: Դիլիջան համայնքը ընդգրկում է 16 հազար 300 բնակիչ ունեցող Դիլիջան քաղաքը եւ Հաղարծին, Թեղուտ,Գոշ, Հովք, Աղավնավանք, Խաչարձան գոյւղերը: Դիլիջան քաղաքի բնակիչների մի զգալի մասը զբաղվում է գյուղատնտեսությամբ, համայնքի գյուղերի բնակիչների հիմնական զբաղմունքը անասնապահությունն ու բուսաբուծությունն են: Սակայն Դիլիջան քաղաքում չկա գյուղատնտեսական շուկա, որտեղ գյուղմթերքներ արտադրողները, առանց միջնորդների, վերավաճառողների, հանդիպեն գնորդներին, կայանա գյուղմթերքների առեւտուր:

Դիլիջան քաղաքի կենտրոնում՝ «Հայփոստի» Դիլիջանի մասնաճյուղի շենքի մոտ, փողոցում կանգնում են գյուղմթերքներ վաճառողներ՝ հիմնականում կանայք, որոնք ծախում են կաթ, հավկիթներ, այլ մթերքներ: Մեծ պարկերով կարտոֆիլ, սոխ, բանջարեղեն վաճառողները Դիլիջանի փողոցներում կայանում են իրենց բեռնատար մեքենաները եւ մեքենաներից են կատարում վաճառքը: Փողոցային առեւտուրը ոչ հարմարավետ եւ հակասանիտարական է: Դիլիջան համայնքի գյուղերի բնակիչները մեր թղթակցին հայտնեցին, որ նախորդ տարիներին Դիլիջանի համայնքապետարանն ամռան ընթացքում քաղաքի կենտրոնում գտնվող տաղավարկրպակներ էր օրավարձով տրամադրում, որտեղ գյուղացիներն իրենց արտադրանքն էին իրացնում: Սակայն այս տարի տաղավարներ չեն տրամադրվել, ռանցում գյուղմթերքների առեւտուր չի կատարվել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՈՎ ԷՐ ՍԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՊԱՏԱՐԱԳՆ ԱՌԱՋՆՈՐԴԱԾ ՔԱՀԱՆԱՆ

Նոյեմբերի 23-ին Արարատ մարզի Արարատ գյուղի Սուրբ Հակոբ եկեղեցում Պատարագ մատուցեց Տեր Երվանդ քահանա Բաբայանը: Պատարագն առաջնորդեց Հայ Առաքելական Եկեղեցու Մայացոտն թեմի առաջնորդ, Պարգեւների շնորհման եւ կարգադրական հարցերով հանձնախմբի անդամ Տեր Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը:

Հիշեցնենք, որ Գեւորգ Սրբազանը միակ հոգեւորականն էր, որ դեմ էր քվեարկել Ստեփան Ասատրյանի (Տեր Արամ քահանա Ասատրյան) կարգալույծ հռչակվելուն:

Գեւորգ Սրբազանը սովորել եւ ավարտել է Մարմարաշենի միջնակարգ դպրոցը: Այնուհետեւ իր ուսումը շարունակել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում, ապա՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանում: 1999թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տեր Ոսկան արքեպիսկոպոս Գալփաքյանի: 2000 թվականին նշանակվել է «Գարեգին Ա» գիտական կենտրոնի նյութական պատասխանատու:

Նույն թվականին Գեւորգյան հոգեւոր ճեմարանում պաշտպանել է ավարտաճառ՝ «Գրիգոր Խլաթեցու Հայսմավուրքն ըստ Էջմիածնի մատենադարանի ձեռագրերի» թեմայով: 2001 թվականի հունվարի 14-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ վերանվանվելով Գեւորգ աբեղա Սարոյան: 2002-2003 թթ. սովորել է Ընդհանուր հոգեբանություն եւ փիլիսոփայություն Նյու Յորքի Քոնքորդիա քոլեջում: 2003-2005 թթ. սովորել է Մեծ Բրիտանիայում Լիձի համալսարանում՝ ստանալով աստվածաբանության եւ հովվագիտության բակալավրի աստիճան: 2005-2006 թթ. սովորելէ Օքսֆորդի համալսարանում՝ ստանալով աստվածաբանության մագիստրոսի աստիճան: 2006-2007 թթ. աշխատել է «Գարեգին Ա» գիտական կենտրոնում՝ որպես փոխտնօրեն: 2007 թվականին նշանակվել է Վազգենյան հոգեւոր դպրանոցի փոխտեսուչ, իսկ 2008-2010 թթ. աշխատել է արդեն որպես տեսուչ: 2010 թ. պաշտպանել է վարդապետական թեզ «Երվանդ Տեր-Մինասյանի եկեղեցագիտական գործունեությունը եւ նրա առնչությունները լիբերալ բողոքական դպրոցի հետ» թեմայով: Նույն թվականին ստացելէ մասնավոր վարդապետության աստիճան Տեր Արարատ եպիսկոպոս Գալթագճյանի ձեռամբ: 2010թ. դեկտեմբերի 10-ից նշանակվել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ:

2011 թ. նոյեմբերի 6-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարքեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ նշանակվել է Արարատյան Հայրապետական թեմի Արարատի մարզի հոգեւոր տեսուչ: 2021 թվականի հունվարին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետկան տնօրինությամբ, Գերաշնորհ Տեր Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը նշանակվել է նորաստեղծ Մասյացոտն թեմի առաջնորդ եւ առ այս պահ թեմն առաջնորդում է Գեւորգ Սրբազանը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ՕՐԵՆՔՈՎ

ՏԵՐԵՎԱԹԱՓԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԹԱՓՈՆՆԵՐՆ ԱՅՐԵԼ ՉԻ ԿԱՐԵԼԻ

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ արգելվում է արտադրության կամ սպառման կամ տերեւաթափից առաջացած թափոններն այրել բնական միջավայրում, բնակավայրերում, դրանց շրջակայքում կամ դրանց այրման համար չնախատեսված այլ վայրերում, կաթսայատներում կամ վառարաններում, թափոնների գործածության օբյեկտներում, հատուկ հատկացված տեղերում կամ չարտոնագրված աղբավայրերում: Այս մասին հայտնում են ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնից:

Հիշեցում. Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգիրքը սահմանում է՝ արտադրության եւ սպառման, ինչպես նաեւ տերեւաթափից առաջացած թափոնները բնական միջավայրում, բնակավայրերում, դրանց շրջակայքում ու դրանց այրման համար չնախատեսված կաթսայատներում, վառարաններում եւ այլ սարքերում այրելը՝ առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինսապատիկի (50 000 դրամ) չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրապատիկի (200 000 դրամ) չափով:

Հավելենք՝ թափված չոր տերեւների այրումը ընդհանրապես վնասում է մեր շրջակա միջավայրը, մեր թոքերը:

1. Նախ փոքր վայրում մեծ քանակությամբ տերեւ այրելու դեպքերը առաջացնում են նույն խնդիրը, ինչ գործարանները կամ ավտոմեքենաների կուտակումները:

2. Այրվելով՝ տերեւը առաջացնում է փոշու մանր կտորներ, որոնք թափանցում են մեր թոքեր՝ առաջացնելով հազ:

3. Այրվող տերեւի ծուխը առաջացնում է ածխածնի երկօքսիդ, որը թափանցելով մեր օրգանիզմ՝ նվազեցնում է հեմոգլոբինի քանակը այրան մեջ:

4. Տերեւի ծուխը հակացուցված է հատկապես տարեցներին, երեխաներին, ասթմայով հիվանդ մարդկանց կամ թոքերի հետ կապված այլ հիվանդություններ ունեցող մարդկանց:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 43 պատահար, 2 մարդ մահացել է, 53-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1,5 ԽՄ ԱՊՕՐԻՆԻ ՀԱՏՎԱԾ ՓԱՅՏԱՆՅՈՒԹ

Շրջակա միջավայրի նախարարությունից հայտնում են, որ հայտնաբերվել է շուրջ 1,5 խմ կաղնի տեսակի ապօրինի հատված փայտանյութ:

«Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության Տավուշի մարզային վարչության Իջեւանի եւ Արծվաբերդի տեղամասի աշխատակիցները ՇՄՆ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Իջեւանի անտառնտեսություն» մասնաճյուղի Իջեւանի անտառպետության 8-րդ պահաբաժնի հարակից տարածքում հայտնաբերել են շուրջ 1,5 խմ կաղնի տեսակի փայտանյութով բեռնված «Ուազ» մակնիշի ավտոմեքենա:

Ստուգմամբ պարզվել է, որ փայտանյութը գոյացել է ապօրինի հատման արդյունքում: Կազմվել է համապատասխան արձանագրություն, փայտանյութը տեղափոխվել է ՇՄՆ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Իջեւանի անտառնտեսություն» մասնաճյուղի ներքին պահեստ»,- ասված է հաղորդագրությունում:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ՝ ՌԴ-Ի ՀԵՏ

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը օրերս ընդունել է ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության արտակարգ եւ լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը ներկա են եղել նաեւ ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալներ Արման Խոջոյանն ու Նարեկ Հովակիմյանը: Այս մասին հայտնել են ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից:

Հանդիպման ընթացքում քննարկվել է ՌԴ-ի հետ տնտեսական հարաբերությունների ընդլայնմանն ու երկու երկրների միջեւ առեւտրաշրջանառության ավելացմանն առնչվող հարցերի լայն շրջանակ:

Առանձին անդրադարձ է կատարվել ագրոարդյունաբերության ոլորտում փոխգործակցության, գյուղատնտեսական արտադրանքի անխափան արտահանումների կազմակերպման, համատեղ ձեռնարկությունների ստեղծման, բուսասանիտարիայի ոլորտում փորձի փոխանակման հնարավորություններին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

Կորել է Ելենա Յուրիի Բոլոտնիկովայի դիպլոմը՝տրված «Էլեկտրոնային համակարգիչների քոլեջից» (Техникум ЭВМ) 23.03.1990 թվականին:

Գրանցման համարը՝4760:

Դիպլոմի սերիան եւ համարը՝ AT003678:

Համարել անվավեր:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

Կորել է Դավիթ Սասունի Նազարյանի դիպլոմը՝տրված ՀԱՊՀ-ի «Էլեկտրական մեքենաներ» ֆակուլտետից 1996թ.-ին: Դիպլոմի սերիան եւ համարը՝ Ա 027625: Գրանցման համար՝2116: Համարել անվավեր:

ՓԱՇԻՆՅԱՆԻՆ «ՈՒՂԵԿՑՈՒՄ» ԷԻՆ ԳՈՐԾԱԴԻՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

ՈՎՔԵՐ ԷԻՆ ՆԵՐԿԱ ՊԱՏԱՐԱԳԻՆ

Ինչպես արդեն անդրադարձել էինք, նոյեմբերի 23-ին՝ կիրակի օրը, Նիկոլ Փաշինյանը Արարատի մարզ Արարատ գյուղի Սուրբ Հակոբ եկեղեցում մասնակցեց Տեր Երվանդ քահանա Քաբայանի ձեռամբ մատուցած Պատարագին: Արարատ համայնքում Նիկոլ Փաշինյանին ջերմորեն դիմավորել է «Հանրապետություն» կուսակցության առաջնորդ Արամ Սարգսյանը, ողջագուրվել նրա հետ, ապա ուղեկցել պատարագին:

Նիկոլ Փաշինյանի հետ Սուրբ Հակոբ եկեղեցում պատարագին են մասնակցել նաեւ իշխանության այլ անդամներ:

ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը հենց առաջին շարքում՝ Փաշինյանի անմիջապես կողքին կանգնած, մասնակցեց ամբողջ պատարագին:

ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը, Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանն այս անգամ եւս Փաշինյանի հետ պատարագի էին գնացել:

Առաջին շարքերում էր նաեւ ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը:

ՔՊ վարչության անդամ Գնել Սանոսյանը, ով պաշտոնանկությունից հետո ասես ընդհատակում էր, երեկ Արարատի մարզում էր: ՔՊ վարչության անդամներ Արմեն Խաչատրյանը, Նազենի Բաղդասրյանը, Երեւանի ավագանու ՔՊ-ական անդամները եւս Փաշինյանին էին ուղեկցում: Իսկ մարզպետ Սեդրակ Թեւոնյանը Փաշինյանին դիմավորողների առաջին շարքում էր կանգնած:

Տեղեկացնենք, որ Տեր Երվանդ քահանայի ձեռամբ մատուցված պատարագն առաջնորդեց Մասյացոտն թեմի առաջնորդ Տեր Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը: ⇨ էջ 5

Հիշեցնենք, որ բոլոր պատարագներին, որոնց մասնակցել է Նիկոլ Փաշինյանը, քահանաները խուսափել են նշել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի անունը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԱԽԱԳԾՎԵԼ Է ՓՈՔՐ ԱՐԲԱՆՅԱԿ

2022 եւ 2023 թվականներին համապատասխանաբար ARMSAT-1 եւ Hayasat-1 արբանյակները տիեզերք արձակելուց հետո Հայաստանում մտածում են համանման հերթական նախագիծը կյանքի կոչելու մասին: Մասնավորապես, երեւանյան աշխատանոցներից մեկում նախագծվել է փոքր արբանյակ, որի պատրաստման նպատակահարմարությունը եւ գործնական կիրառության ոլորտները դեռ պետք է հստակեցվեն մասնագետների հետ քննարկումների արդյունքում:

«Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցի կրթական ծրագրի ղեկավար Մայա Շահումյանը «Արմենպրես» լրատվականի թղթակցի հետ զրույցում նշել է, որ իրագործման դեպքում դա կարող է շատ հավակնոտ նախագիծ համարվել:

«Երեւանի աշխատանոցներից մեկում նախագծվել է Cubesat ձեւաչափի սարքը (խմբ. նույն ձեւաչափի էին նաեւ ARMSAT-1 եւ Hayasat-1 արբանյակները), որը փոքր արբանյակի տարբերակ է: Դա տիեզերական նախագծերից մեկն է, որի ուղղությամբ ուզում ենք աշխատել, ապահովել շահագրգիռ կազմակերպությունների կամ ընկերությունների կապը մասնագետների հետ, որպեսզի քննարկումների արդյունքում պարզ դառնա, թե որ ուղղությամբ է պետք շարունակել ընթացքը: Կարծում եմ՝ մի քանի ամիս կպահանջվի այդ ամենը հստակեցնելու համար: Դա կարող է շատ հավակնոտ նախագիծ դիտվել», - նշել է Մայա Շահումյանը:

2022 թվականի մայիսի 25-ին տիեզերք էր արձակվել Հայաստանի առաջին՝ ARMSAT-1 արբանյակը, որը կոչված էր նպաստելու սահմանների պաշտպանությանը, արտակարգ իրավիճակների եւ շրջակա միջավայրի մոնիթորինգին, ինչպես նաեւ գյուղատնտեսության եւ շինարարության աշխատանքներին աջակցելուն: ARMSAT-1-ը ստեղծվել էր իսպանական SATLANTIS ընկերության մասնակցությամբ:

Հայկական արտադրության առաջին արբանյակ Hayasat-1-ը տիեզերք էր արձակվել 2023 թվականի դեկտեմբերի 1-ին՝ գիտական ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով: Այն մշակվել եւ պատրաստվել էր Հայաստանում՝ «Բազումք» տիեզերական հետազոտությունների լաբորատորիայի եւ Գիտական նորարարությունների եւ կրթության կենտրոնի թիմի կողմից:

Իրենց առաքելություններն արդեն ավարտած երկու արբանյակներից ARMSAT-1-ն արձակվել էր SpaceX-ի հրթիռների միջոցով՝ ԱՄՆ Կանավերալ հրվանդանում գտնվող տիեզերակայանից, իսկ Hayasat-1-ը՝ Վանդենբերգի ռազմաօդային բազայից:

ՑՈՒՅՑ՝ ՄԱԿՐՈՆԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ՊԱՀԱՆՋՈՎ

Փարիզում տեղի է ունեցել Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի եւ վարչապետ Ֆրանսուա Բայրուի հրաժարականի պահանջով զանգվածային ցույց: Այդ մասին տեղեկանում ենք «ՏԱՍՍ»-ից:

Ամբոխը վանկարկել է «Մակրոն, հրաժարական տուր» կարգախոսը: Ցուցարարները նաեւ պահանջել են վարչապետի հրաժարականը՝դժգոհություն հայտնելով կառավարության քաղաքականության վերաբերյալ, որը, նրանց կարծիքով, օգուտ է բերել միայն մի քանի անհատների եւ խմբերի: Նրանք մեղադրում են խորհրդարանի երկու պալատներին՝ Ազգային ժողովին եւ Սենատին, ԵՄ բոլոր համաձայնագրերն ընդունելու մեջ, որոնց պատճառով Ֆրանսիան հայտնվել է իր ներկայիս իրավիճակում:

Ցույցի կազմակերպիչ, «Հայրենասերներ» կուսակցության ղեկավար Ֆլորիան Ֆիլիպոն իր կողմնակիցների հետ կանգնել է ցուցարարների շարասյան առջեւով ընթացող բեռնատար մեքենայի հարթակի վրա՝ ղեկավարելով զանգվածային միջոցառումը:

«Իմ ուղերձը Մակրոնին այն է, որ նա պետք է հեռանա», - ասել է Ֆիլիպոն՝հավելելով, որ առաջին քայլը կլինի Բայրուի հրաժարականը սեպտեմբերի 8-ին կայանալիք վստահության քվեարկության ժամանակ: Այնուհետեւ նա կոչ է արել խորհրդարանականներին քվեարկության դնել ճախակողմյան ուժերի նախաձեռնությունը՝ նախագահին իշխանությունից հեռացնելու գործընթաց սկսելու համար:

«Ֆրանսիացիները վրդովված են խնայողության ծրագրից եւ պատերազմի հեռանկարից: Նրանք արդեն բավականաչափ հանդուժել են եւ ուզում են, որ Մակրոնը հեռանա», - հավելել է քաղաքական գործիչը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

«ԵՎ ՈԴԻՍԵՎՍԸ ԴՈՒՐՍ ԵԿԱՎ ԲԱՑ ԾՈՎ ....»

ՆՈԼԱՆԻ ՆՈՐ ՖԻԼՄԸ ԷԿՐԱՆՆԵՐ ԿԲԱՐՁՐԱՆԱ ԱՄՌԱՆԸ

Մինչ սպասում ենք Քրիստոֆեր Նոլանի «Ոդիսեւս»-ի պրեմիերային, դիտենք ֆիլմից նոր լուսանկարները: Այս անգամ ստեղծողները կիսվել են Զենդեյայի եւ Ռոբերտ Փաթինսոնի լուսանկարներով. այս մասին հայտնում է Complex-ը:

Լուսանկարում Զենդեյան մարմնավորում է աստվածուհի Աթենասին, իսկ նրա կողքին կանգնած է Մեթ Դեյմոնը՝ Ոդիսեւսի կերպարում: Ռոբերտ Փաթինսոնը ներկայանում է Անտինոուսի՝ Պենելոպեի փեսացուներից մեկի դերում:

Սոցիալական հարթակներում որոշ օգտատերեր նմանություն են նկատել կերպարների տեսքի ու Դենի Վիլնյովի ստեղծած «Դյուն» աշխարհների միջեւ՝ մեկնաբանելով. «Նրանք այնպիսի տեսք ունեն, կարծես «Դյունում» լինեն»: Սակայն բոլորը չէ, որ համաձայնել են այս դիտարկմանը. մյուսները նշում են. «Գուցե որովհետեւ նրանք նույն մարդն են»:

Ֆիլմում Զենդեյայի, Փաթինսոնի եւ Դեյմոնի հետ միասին նկարահանվել են նաեւ Թոմ Հոլանդը, Էնն Հեթուեյը, Լուպիտա Նիոնգոն, Շարլիզ Թերոնը, Ջոն Բերնթալը, Միա Գոթը եւ այլ հայտնի դերասաններ:

Նոլանի նոր աշխատանքը հիմնված է Հոմերոսի «Ոդիսական» դարավոր էպոսի վրա, որտեղ պատմվում է Իթակեի արքա Ոդիսեւսի տասը տարի տեւած շրջագայության մասին՝ Տրոյական պատերազմից տուն վերադառնալու ճանապարհին, ինչպես նաեւ նրա հավատարիմ կնոջ՝ Պենելոպեի, որ դիմանում է տարիներով տեւած փորձություններին:

Նոլանի «Ոդիսական»-ի նկարահանումներն ավարտվել են 2025-ի օգոստոսին, իսկ պրեմիերան նախատեսված է 2026-ի հուլիսին: Այս ֆիլմը ռեժիսորի առաջին խոշոր նախագիծն է «Օպենհայմերի» մեծ հաջողությունից հետո, որն արժանացավ յոթ «Օսկարի», այդ թվում՝ «Լավագույն ֆիլմ», «Լավագույն ռեժիսոր» եւ «Լավագույն օպերատորական աշխատանք» անվանակարգերում:

Ինչպես միշտ, Նոլանն այս նախագծում հանդես է գալիս ռեժիսորի, սցենարիստի եւ գործադիր պրոդյուսերի դերում: Ֆիլմը ներկայացվում է որպես «միֆական, գործողություններով հագեցած էպոս», որը հաստատապես անտարբեր չի թողնի աշխարհի ամենահայտնի էպոսի սիրահարներին եւ կինոմաններին:

Թեպետ առաջին հայացքից հունական դիցաբանությանն անդրադարձը անսպասելի կարող է թվալ ռեժիսորի կողմից, սակայն իրականում Նոլանը վաղուց է հետաքրքրված այս թեմայով. 2000-ականների սկզբին նա անգամ մտադրված էր նկարահանել «Տրոյան»՝ Վոլֆգանգ Պետերսենի փոխարեն:

Նոր նախագծում Նոլանը կրկին աշխատում է իր մշտական գործընկերների հետ: Նրա կինը՝ Էմմա Թոմասը, ինչպես միշտ, զբաղվում է պրոդյուսերական աշխատանքով, Հոյտե վան Հոյտեման վերադառնում է օպերատորի զորեղ տեսլականով, իսկ Լյուդվիգ Գորանսոնը («Օպենհայմեր» ֆիլմի սաունդթրեքի հեղինակը) ստեղծում է ֆիլմի երաժշտական միջավայրը:

«Ոդիսական»-ի պրեմիերան նախատեսված է 2026 թվականի հուլիսի 17-ին:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

2026-ԻՑ ՈՒԺԻ ՄԵՋ ԿՄՏՆԵՆ ՆՈՐ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ օրերս կայացած նիստում ընդունված որոշմամբ սահմանվել են նոր պայմաններ՝ օպերատորների կողմից բաժանորդային պայմանագրերում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների որակի չափանիշների ամրագրման վերաբերյալ:



Մասնավորապես, փոփոխությունները վերաբերում են ինտերնետ հասանելիության ծառայությունների որակի մի շարք չափանիշներին՝ներառյալ բաժանորդային պայմանագրերում նշվելիք տվյալների հոսքի արագությունների նկարագրությունը, միացման/ակտիվացման/վերաակտիվացման համար անհրաժեշտ ժամանակահատվածի սահմանումը, ինչպես նաեւ ծառայությունների որակի վերաբերյալ բաժանորդների բողոքներին արձագանքելու ժամկետները: Կարգավորումները ներառում են նաեւ ծառայությունների մատուցման ժամանակահատվածի հաշվարկման սկզբունքները եւ ծառայությունների ակտիվացման ընթացակարգի մանրամասն նկարագրությունը՝ ընդգրկելով ժամանակահատվածի տեւողությունը, սկիզբն ու ավարտը, ինչպես նաեւ օրերի, ժամերի եւ րոպեների հաշվարկի մոտեցումները:

Սահմանվել են նաեւ պայմաններ, որոնցով օպերատորները պետք է հստակեցնեն՝ ինչ ժամկետում են վերականգնում ծառայությունների որակը՝ բաժանորդից անկախ տեխնիկական պատճառներով ծառայության անկման կամ ընդհատման (ներառյալ՝ խափանում կամ անսարքություն) դեպքում: Բացի դրանից, սահմանվել են բաժանորդներին տրամադրվող փոխհատուցման դեպքերը եւ կարգը:

Կարգավորումների մշակման հիմքում դրվել է նաեւ Եվրամիության փորձը՝ հաշվի առնելով ՀՀ-ԵՄ համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրով (ՀԳՀՄ/CEPA) նախատեսված օրենսդրության մոտարկման պարտավորությունները:

Նոր որոշումը նպատակ ունի բարձրացնել ծառայությունների թափանցիկությունն ու մատուցման որակը՝ ավելի հստակ սահմանելով օպերատորների պարտավորությունները եւ բաժանորդների իրավունքները: Սա կարող է նպաստել ինչպես շուկայի մրցակցության, այնպես էլ սպառողների պաշտպանվածության ուժեղացմանը:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

«ՆՄԱՆ ՎԱՐՊԵՏՆԵՐԻՑ ՍՈՎՈՐԵԼ Է ՊԵՏՔ». ՍՊԵՐՑՅԱՆ

«Կրասնոդարի» եւ Հայաստանի ազգային հավաքականի կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանը մեկնաբանել է Աշխարհի 2026թ. առաջնության ընտրական փուլի 6-րդ տուրում Պորտուգալիայի ընտրանուց կրած ծանր պարտությունը: Հիշեցնենք, որ Ռոբերտո Մարտինեսի գլխավորած թիմը հաղթել էր 9:1 հաշվով:

«Սա մոտիվացիա է ավելի շատ ու տքնաջան աշխատելու համար: Նման վարպետներից սովորել է պետք: Անհրաժեշտ է դրական կողմեր փնտրել: Ամենահեշտը՝ ամեն ինչ թողնելն ու հուսահատվելն է: Սպորտում հոգեբանությունը կարեւոր բաղադրիչ է:

Անձնական տեսանկյունից, գուցե, կարեւոր պահ է, որ գոլ խփեցի, նաեւ՝ հավաքականի համար, բայց այստեղ պետք է մի փոքր այլ դասեր քաղել», - Սպերցյանի խոսքերն է փոխանցում «Չեմպիոնատ»-ը:

ՄԱՐԱԴՈՆԱՆ ԳԻՏԱԿՑՈՒՄ ԷՐ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսաստանում կայացած Աշխարհի 2018 թվականի առաջնության վիճակահանության վարող, մարզական լրագրող Մարիա Կոմանդնայան անդրադարձել է լեգենդար Նիկիտա Սիմոնյանի մահվանը՝ կիսվելով արգենտինացի աշխարհահռչակ ֆուտբոլիստ Դիեգո Մարադոնայի եւ Սիմոնյանի հանդիպման մասին հուզիչ դրվագով:

Կոմանդնայան սոցցանցերում հիշել է վիճակահանության արարողության ժամանակ տեղի ունեցածը, երբ Սիմոնյանի ձեռքից պատահաբար ընկել էր գնդակը, իսկ Մարադոնան անմիջապես շտապել էր օգնության:

«Հանգչեք խաղաղությամբ, Նիկիտա Պավլովիչ…», - գրել է Կոմանդնայան:

Հաղորդավարուհին նաեւ իր հիացմունքն է հայտնել Սիմոնյանի աշխատասիրության եւ ֆուտբոլի հանդեպ նվիրվածության վերաբերյալ. «Ինձ համար բացարձակ շոկ է, որ Նիկիտա Պավլովիչը գրեթե ամեն օր գնում էր աշխատանքի ՌՄ (Ռուսաստանի ֆուտբոլային միության) գրասենյակ… Ինչպե՞ս պետք է սիրել սեփական գործը, սիրել ֆուտբոլը… 1956 թվականի Օլիմպիական չեմպիոն: Միայն պատկերացրեք: Նա ապրող օլիմպիական չեմպիոններից ամենատարեցն էր: Հեռացավ 99 տարեկանում… Լեգենդ»:

Նիկիտա Սիմոնյանը մահացել է կիրակի՝ նոյեմբերի 23-ին, 99 տարեկանում: Նա «Սպարտակի» պատմության լավագույն ռմբարկուն էր, 1956 թ. օլիմպիական չեմպիոն, ԽՍՀՄ քառակի չեմպիոն (որպես խաղացող) եւ եռակի չեմպիոն (որպես մարզիչ): 1992 թվականից զբաղեցնում էր ՌՖՄ առաջին փոխնախագահի պաշտոնը:

Դիեգո Մարադոնան կյանքից հեռացել է 2020 թվականի նոյեմբերի 25-ին՝ 60 տարեկանում:

● Նոյեմբերի 27-ին՝20:00-ին, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Ծաղիկներ Էլջերնոնի համար» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝4.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀՈԳԵՎՈՐ

ՀԱՐՑ. Հեսարրիր է իմանալ՝ Հայ Առաքելական եկեղեցին ինչո՞ւս է ընդունում կին հոգեւորական ունենալու գաղափարը: Արեւմուտքում կան եկեղեցիներ, ուր դա հնարավոր է:

Ա. Մալխասյան (34 տարեկան, տնտեսագետ)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հայ Առաքելական Եկեղեցուն ընդհանրապես խորթ է կանանց քահանայագործելու հասկացողությունը, որը նորամուտ է քրիստոնյա աշխարհում: Այն որդեգրվել է մի շարք բողոքական եկեղեցիների ու կրոնական հարանվանությունների կողմից: Հարցն աստվածաբանական հիմնավորում ունի եւ առնչվում է հոգեւորականի՝ քահանայության դերի ու կոչման ճիշտ ընկալման եւ գիտակցման հետ: Քրիստոս՝ Սուրբ Երրորդության երկրորդ Անձը, Աստծո Որդին, մարդացել, մարմնացել, չարչարվել եւ պատարագվել է մարդկության մեղքերի փրկության համար, եւ հաստատել Հաղորդության Խորհուրդը՝ Իր հիշատակի եւ Իր Մարմնին ու Արյանը հաղորդակից լինելու համար: Հոգեւորականը պատարագի ընթացքում խորհրդանշում է Քրիստոսին, ապա որպես քահանա՝ կատարում է հավիտենական քահանայապետ հաստատված Քրիստոսի հաղորդության խորհուրդը եւ դրան մասնակից դարձնում ժողովրդին: Հետեւաբար, միայն տղամարդը կարող է եկեղեցում եւ այլուր քահանայություն կատարել, քանի որ այդ ծառայությունը նրան է վստահված հենց Տիրոջից: Անշուշտ, քահանայի գործունեությունը եկեղեցական ծիսակատարություններով միայն սահմանափակվելը չէ: Ինչպես Հիսուս Ինքն էր ժողովրդի հետ շփվում եւ անդրադառնում նրանց կյանքին ու կենսակերպին, այնպես էլ հոգեւորականն է զբաղվում հավատացյալների ու ժողովրդի ընկերային հարցերով, որոնք մարդու կյանքի անբաժանելի մասն են եւ շատ հաճախ կարող են ազդել հավատացյալի ներաշխարհի վրա:

Օրինությամբ՝ Տ. Մուշեղ աբեղա Բաբայան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Փաստորեն Հայ եկեղեցին մերժում է կանանց քահանայության գաղափարը, եւ սրա հիմքում նրանց իրավունքները ոտնահարող որեւէ միտում կամ ստորադասման նշույլ անգամ չկա:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասեք՝ ինչ կարող եմ անել այն դեպքում, երբ ֆինանսական կազմակերպությունը կամավոր չի կատարում Հաշտարարի որոշումը:

Սերգեյ Մնացականյան (45 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան հայտնում ենք, որ եթե Հաշտարարը կայացրել է որոշում, եւ Դուք համաձայնել եք այդ որոշմանը, սակայն ֆինանսական կազմակերպությունը Հաշտարարի որոշմամբ սահմանված ժամկետում չի կատարել այն, ապա Դուք իրավունք ունեք Հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմում ներկայացնել դատարան:

Դիմում ներկայացնելու կարգը եւ ժամկետները սահմանվում են՝

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով (հոդված 15)

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով (գլուխ 51 `հոդվածներ 341 345),

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով (հոդվածներ 1, 2, 17, 18, 23):

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ Դատարան դիմում ներկայացնելիս կարող եք առաջնորդվել Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի կողմից մշակված «Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումի վերաբերյալ» ուղեցույցով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ «Շամշյան.քոմ»-ի

Նոյեմբերի 24-ին ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության հարյուրավոր հրշեջ-փրկարարներ, կամավորներ եւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Գեղարքունիքի ու Տավուշի գումարտակների պարեկներ, վտանգելով իրենց կյանքը, պայքարում էին Ճամբարակ-Թթուջուր անտառային հատվածներում բռնկված կրակի դեմ:

Ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը հայտնել էր, որ հրշեջներին, կամավորներին հաջողվել է կանխել կրակի տարածումը դեպի Տավուշի մարզ, չնայած այդ ամենին՝ մարզում նույնպես հրշեջները հերթապահություն են իրականացնում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 4 - 9 + 9 + 14
Կոտայքի լեռներ	- 4 - 7 +11 + 14
Կոտայքի նախալեռներ	- 1 + 2 +12 + 15
Գեղարքունիք	- 3 - 7 +11 + 15
Լոռի	0 - 4 +20 + 23
Տավուշ	+ 3 + 6 +18 + 21
Արագածոտնի լեռներ	- 4 - 8 +10 + 14
Արագածոտնի նախալեռներ	- 1 + 3 +11 + 15

Արարատ	0 + 4 +14 + 16
Արմավիր	0 + 5 +14 + 16
Վայոց ձորի լեռներ	- 1 - 6 +13 + 16
Վայոց ձորի նախալեռներ	- 3 + 1 +11 + 14
Սյունիքի նախալեռներ	- 4 + 1 +18 + 22
Սյունիքի հովիտներ	+ 4 + 8 +20 + 24
ԼՂՀ	+ 4 + 7 +17 + 19
Երեւան	+4 + 5 +11 + 13

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **24.11.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*